ԱՐՓԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍԱԱԴԻԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհագրական դիրքի և պատմական պայմանների բերմամբ, շատ հին ժամանակներից սկսած, հայ ժողովուրդը շփման մեջ է եղել հարևան պարսիկների հետ։

Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ խոսում է պարսից առասպելների՝ Բյուրասպի, Աժդահակի, այսինքն Զոհակի մասին։ Պատմահայրը շատ լավ ծանոթ է եղել պարսից առասպելներին, որոնք հետագայում, ԺԱ դարում, Ֆիրդուսու կողմից մշակվում են ու դառնում «Շահնամե» դյուցազներգական ստեղծագործության հիմքն ու առանցքը։ Պարսկական առասպելների ամենահին գրառումը Զ դարից է, մինչդեռ Խորենացին Ե դարում արդեն լավ ծանոթ է եղել նրանց, և ոչ միայն Խորենացին, այլև Սահակ Բագրատունին, որը խնդրել է Խորենացուն գրի առնել ու մեկնել դրանք։ Խորենացին ոչ միայն գիտե Բյուրասպի Աժդահակի պատմությունը, որ նույնությամբ պատմում է Ֆիրդուսին, այլև Ռոստոմին, սկսած նրա ծագումնաբանությունից մինչև ահավոր ուժն ու զորությունը[1]։

Հետագայում Կոստանդին Երզնկացին գրում է ոտանավոր «Շահնամե»-ի չափով և կցում հետևյալ ծանոթությունը. «Այս մի կայր, որ Շահ-Նամայ ասէր ձայնով։ Հայ եղբայրք խնդրեցին, թէ ի Շահ-Նամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի զբանքս զայս։ Ի Շահ-Նամայի ձայն կարդացէք»[2]։

Ֆրիկն իր բանաստեղծությունների մեջ ոչ միայն օգտագործում է պարսկերեն բառեր, այլև մի ամբողջ քառյակ, որը երկար ժամանակ մեր բանասերների կողմից ոչ միայն չէր վերծանված, այլև անհայտ էր աղբյուրն ու հեղինակը։ Տիրայր արքեպիսկոպոսի ջանքերն այդ ուղղությամբ, ինչպես և Միհրդատ Թիրյաքյանի մասնակցությունն անհետևանք էին անցել։ Սակայն վերջերս (1956 թ.) պարսկագետներ Վ. Ավթանդիլյանն ու Հ. Փափազյանը կարողացել են կարդալ քառյակի առաջին տողի աղավաղված երեք բառերը, և պարզել, որ Ֆրիկի մոտ դրան հաջորդող քառատողը պարսկերեն թարգմանությունն է։ Պարսկագետ, բանասեր Բ. Չուգասզյանը գտնում է, որ քառյակի թարգմանիչը Ֆրիկն է, սակայն հեղինակի հարցը վերջնականապես դեռևս չի լուծված, քանի որ հեղինակ համարվող անձնավորություններն ավելի ուշ են ապրել, քան քառյակի հայտնի դառնալը։

Հայ գրողները միշտ էլ սիրով են հետևել հարևան ժողովուրդների, տվյալ դեպքում պարսիկների հարուստ գրականությանը, որի լավագույն արտահայտությունն են հանդիսանում Իրանի կյանքը պատկերող Րաֆ-

---

[1] Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1940 թ., էջ 57—58, 277։

[2] «Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր քերթվածները», հրատարակեց Հ. Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1905, էջ 128 (տե՛ս նույնը Ֆրիկ, «Դիվան», Նյու-Յորք, էջ 126։

ֆու[3], Վ. Փափազյանի[4] վեպերը, հեքիաթներն ու նամակները, Թումանյանի[5], Իսահակյանի[6] պոեմներն ու առասպելները, Գ. Սարյանի[7] արևելյան բալլադների շարքը և այլն։

Ինչպես անցյալ, այնպես էլ ժամանակակից սովետական և արտասահմանյան հայ գրողները, թարգմանիչներն ու գրականագետները իրենց մասնակցությունն են բերել նաև պարսկա-թաջիկական կլասիկների թարգմանության գործին (Լ. Մեսրոպ, Հ. Միրզայան, Մ. Մաքսուդյան, Փառնակ, Ս. Ջթլյան, Ա. Մելիք-Վարդանյան, Գ. Ասատուր, Վ. Նորենց, Ս. Տարոնցի, Հ. Հովհաննիսյան, Հ. Ղուկասյան, Ս. Ումարյան, Մ. Խերանյան, Ա. Գրաշի և ուրիշներ), թարգմանելով Ֆիրդուսու, Խայամի, Հաֆեզի, Ռուդաքիի, Խաքանիի և այլոց ստեղծագործություններից։

Ֆիրդուսու կյանքի պատմությունը հուզել է մեծ հեղինակների։ Հայտնի են գերմանացի բանաստեղծ Հ. Հայնեի, ռուս գրող Վ. Օվսյաննիկովի, հայ մանկագիր Աթաբեկ Խնկոյանի և ուրիշների Ֆիրդուսու մասին ստեղծած գործերը։ Հայնեի «Ֆիրդուսի» չափածո ստեղծագործությունը հայ գրողների կողմից ունեցել է մի շարք թարգմանություններ ու փոխադրություններ, որ կատարել են Րաֆֆին, Ղ. Աղայանը, Պ. Միքայելյանը և ուրիշներ։ Րաֆֆին ոչ միայն թարգմանել է Հայնեի «Ֆիրդուսի» բանաստեղծությունը, այլև հայերենի է փոխադրել Վ. Օվսյաննիկովի «Ֆիրդուսի» արձակ ստեղծագործությունը։

Հատկանշական է Հ. Աճառյանի կազմած «Ֆիրդուսի» ժողովածուն, որտեղ հավաքված են իր կողմից «Շահնամե»-ից քաղված ու թարգմանած այն հատվածները, որ վերաբերում են հայերին ու Հայաստանին[8], ինչպես և Սաադիից ու Խայամից կատարած թարգմանությունները, որոնք անտիպ են։

Վրթանես Փափազյանը շատ գեղեցիկ բանաստեղծական մշակման է ենթարկել «Ֆահրադ ու Շիրին» արաբական արձակ զրույցը և «Զոհակ» լեգենդը «Շահնամե»-ից։ Ավետիք Իսահակյանը թարգմանություններ է կատարել Հաֆեզից, Աբու-Ալ-Ալա Ալ-Մահարիից և մշակել մի շարք արևելյան առակներ ու զրույցներ, իսկ Հովհաննես Թումանյանը թարգմանել է Խաքանիի քառյակներից։

Հայ գրական հասարակության հայտնի են ինչպես անցյալ, այնպես էլ ներկայիս կատարված «Շահնամե»-ից մի շարք թարգմանություններն ու ուսումնասիրությունները, Խայամի քառյակների բազմաթիվ հրատարակությունները, Հաֆեզի, Ռուդաքիի քառյակները, բանաստեղծություններն ու ներբողներր և վերջապես Աթթարի սուֆիական ու Սաադիի բարոյախոսական գրվածքները։

* * *

Սաադին իրանական դասական գրականության խոշոր դեմքերից մեկն է, որ ապրել է 1184—1292 թվականներին։ Նա իրավամբ լայն տարածում է գտել ոչ միայն իր հայրենի երկրում, այլև ամբողջ Արևելքում, Եվրոպայում և Ռուսաստանում։ Սաադիի գրչին են պատկանում բազմաթիվ լիրիկական բանաստեղծություններ, ներբողներ և քառյակներ։ Սակայն նրա խոշոր գործերն են կազմում «Սեիր-Նամե»-ն, «Բուսթան»-ն ու «Գոլեստան»-ը, իսկ վերջինս հանդիսանում է հեղինակի ստեղծագործության պսակը։

«Գոլեստան»-ը արձակ երկ է, միահյուսված չափածոյով, ընդ որում չափածոյի որոշ մասը գրված է արաբերեն։ Արաբերեն է գրված նաև նրա բանաստեղծական երկերի մի զգալի մասը, որպես իր ժամանակի ընդունված բարձր գրական և գիտական լեզու։

Սաադին, շնորհիվ իր երկարամյա կյանքի ընթացքում կուտակած մեծ փորձի, ստացած բարձր կրթության, երկարատև ճանապարհորդությունների, լայն հայեցողության, դիտել է կյանքն իր բոլոր կողմերով, մանրազնին ուսումնասիրել հասարակության տարբեր շերտերի մարդկանց, և իր «Գոլեստան»-ում ռեալիստորեն արտացոլել նրանց ներաշխարհը, բարքերը, կենցաղն ու գործունեությունը։ Նա, որքան բարյացակամ ու սիրալիր է դեպի աղքատները, խեղճերն ու թշվառները, նույնքան խիստ ու անողոք է դեպի բարձրաստիճան պաշտոնյաները, վեզիրներն ու թագավորները։

Սաադիին հուզում են մարդու սոցիալական վիճակը, նրա նկատմամբ ցուցաբեր-

---

[3] *«Ճանապարհորդություն Պարսկաստանում» նամակների շարքը, «Խաջ-Փուչ», «Թիրի-Տորաբանի» նկարագրությունները և այլն։*

[4] *«Ալեմգիր», «Ազերֆեզա» (վեպ հայ-պարսկական կյանքից), «Փիրուզե» պարսկական հեքիաթը և այլն։*

[5] *«Թմկաբերդի առումը», «Թագավորն ու չարչին» և այլն։*

[6] *«Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ» լեգենդը, «Լեյլի և Մեջլում» բալլադը, «Աբու-Լալա-Մահարի» պոեմը և այլն։*

[7] *«Գյուլխանդա», «Գյուլնարա», «Իրանի», «Թարգանի մորմոքը», «Շահն ու Մեջնունը», «Երգիչ Սալվարին» և ուրիշներ։*

[8] *«Օտար աղբյուրները հայերի մասին», № 4, Պարսկական աղբյուրներ, Ֆիրդուսի», քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, 1942 թ., Երևան (67 էջ)։*

վող անարդարությունը, շահագործումն ու կեղեքումը։ Գրքում մի շարք տեղեր նա զայրույթով բողոքում է մարդու կողմից մարդու շահագործման դեմ, ստրկատիրության դեմ և Աստծու դատաստանին հանձնում այդպիսիններին։ Նա բարձր է գնահատում մարդու լավ արարքները, առաքինությունը, բարոյականությունը, աստվածավախությունը։

Նա, որքան դաժան է իր քննադատության ու ծայրի մեջ, որքան բարի իր խրատներում ու հորդորներում, նույնքան նուրբ է ու քնքուշ՝ իր լիրիկական հատվածներում։ Սերը Սաադիի համար ամենամեծ քաղցրությունն է և պատճառ՝ գոյության մեջ հարատևելու։ Չկան ավելի լավ օրեր, քան սիրո ժամանակ, սերն սկիզբ ունի և վերջ չունի։ Նրա սիրո զգացումները բարձր են ու նվիրական, նրա համար մայիսյան զեփյուռը քաղցր է ինչպես վարդի բուրմունքը, սոխակի սերը, կանաչ դաշտերն ու կապույտ երկինքը։

Սաադիի «Գուլիստան»-ն ունի 200-ից ավելի թարգմանություն՝ հնդկերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, հինդի, իտալերեն, լեհերեն, թուրքերեն, ռումիներեն և այլ լեզուներով, որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի հրատարակություն՝ առաջաբանով, ծանոթագրություններով, վերծանումներով, բառարանով՝ կազմված հայտնի արևելագետների կողմից, ինչպիսիք են Ադամ Օլեարին, Գեորգի Գենցը, Հարինգտոնը, Գլադվինը, Ջեմս Դյումուլենը, Ջոն Կոքսը, Սիմելեն, Իստվիքը, Շպենգերը, Դեֆրեմերին, Ֆրանցիս Ջոնսոնը, Նասաու Լիսը, Հենրի Մասսեն, Ջոն Փլեյթը և շատ ուրիշներ։

* * *

Իրանական գրականությունը դարձել է ոգեշնչման աղբյուր համաշխարհային խոշոր դեմքերի համար։ Այն իր արտացոլումն է գտել նաև հայ գրականության մեջ։ Հատկանշական են վարպետի՝ Ավետիք Իսահակյանի «Օմար Խայյամի վեճը Աստծու հետ» առասպելը և «Սաադիի» վերջին գարունը, արձակ պոեմը։

Սաադիի «Գուլիստան»-ը հանդիսացել է պարսկերեն լեզվի ուսուցման ձեռնարկ թուրք և հայկական միջնակարգ և բարձրագույն դպրոցներում։ Հայտնի է Խաչատուր Աբովյանի վկայությունն այն մասին, որ «... Թուրքերն իրենց մզկիթներում... Թուրքերենի անվան տակ մեր բարի մոլլաների մոտ կարդում են «Գուլիստան»-ը, Հաֆեզը, Թարիք Նադիրի և պարսիկ այլ հեղինակներ...»[9]։

Այս սկզբունքով առաջնորդվելով է թերևս, որ ականավոր գիտնական Հրաչյա Աճառյանը ևս Երևանի Պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժնում պարսկերեն լեզվի համար որպես հիմնական դասագիրք ընտրել էր Սաադիի «Գուլիստան»-ը։

* * *

Ռուսաստանում Սաադիից առաջին անգամ թարգմանություններ կատարել է Մատվեյ Կամագովը (Մատթեոս Ղամազյանը), որ մասնագիտությամբ լինելով ինժեներ, զբաղվել է նաև գրականությամբ և շնորհիվ արևելյան ու եվրոպական մի շարք լեզուների իմացության, 1831 թվականին Թիֆլիսում զինվորական ծառայության մեջ գտնված ժամանակ, Սաադիի բանաստեղծություններից մի քանիսը թարգմանել է ռուսերենի, որոնցից «Թախիծ» բանաստեղծությունը տպագրվել է մի քանի անգամ։ Նա այնքան է հրապուրվել Սաադիով, որ իր կողմից մի բանաստեղծություն ձոնել է նրան[10]։

«Գուլիստան»-ի առաջին ռուսերեն ամբողջական թարգմանությունը պատկանում է Ստեփանոս Նազարյանցին, որ հրատարակվել է 1857 թվականին Մոսկվայում։ Այնուհետև «Գուլիստան»-ն ունեցել է մի շարք թարգմանություններ ու հրատարակություններ, որոնք շարունակվում են մինչև մեր օրերը՝ Կ. Լամբրոսի (1862), Ի. Խոլմոգորովի (1882), ավելի ուշ Ե. Բերտելսի (1922), սովետական շրջանում՝ 1949, 1954, 1957, 1958, 1959 թվականներին Մոսկվայում, Ստալինաբադում (Դուշանբե) և այլուր։

Հայ գրական միտքը ևս մեծ հետաքրքրություն է ցուցաբերել դեպի իրանական խոշոր բանաստեղծն ու մտածողը, թարգմանելով մի շարք բանաստեղծություններ և առանձին հատվածներ «Բուսթան»-ից և «Գուլիստան»-ից։ Սաադիի թարգմանությամբ զբաղվել են հայտնի թարգմանիչներ Հովհաննես Խան Մասեհյանը, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը, դոկտոր Հարություն Թիրյաքյանը, Հովսեփ Միրզայանը, պրոֆեսոր Ռուբեն Աբրահամյանը, բազմավաստակ գիտնական Հրաչյա Աճառյանը և ուրիշներ։

Սաադիի ստեղծագործությունների ամենավաղ թարգմանությունը հայերեն լեզվով

---

[9] Խ. Աբովյան. «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 5, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան 1950 թ., էջ 193։

[10] «Կոմունիստ», Բաքու, 1958, № 127, էջ 4 և Журнал «Сын отечества», М. 1837, стр. 420—430.

հանդիպում ենք Կալկաթայում հրատարակվող «Ազգասեր» հանդեսի էջերում, 1846—1847 թվականներին, ենթադրաբար Մ. Գ. Թաղիադյանցի թարգմանությամբ։ Այնուհետև Թիֆլիսի «Մուրճ», «Լումա» հանդեսներում և «Ջարթոնք» գրական-գեղարվեստական ժողովածուում, Փարիզի «Անահիտ»-ում, Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի և Հրանտ ու Զապել Ասատուրների կազմած «Գանձարան» դասագրքի էջերում (Կ. Պոլիս)։ Իսկ Թեհրանի «Նոր գաղափար» և «Լույս» հանդեսները, «Վերածնունդ» շաբաթաթերթը, «Ալիք» թերթը, «Նավասարդ» ժողովածուն հաջորդաբար հրատարակում են Սաադիից հատվածներ Հ. Միրզայանի, Ս. Ումարյանի, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ։

Սակայն «Գոլեստան»-ի ամբողջական հրատարակությունը առաջին անգամ լույս է տեսել 1929-ին Նյու-Յորքում, դոկտոր Հարություն Թիրյաքյանի թարգմանությամբ, որն ավարտված է եղել 1910 թվականին։ Եվ հաջորդ հրատարակությունը լույս ընծայեց Հայաստանի Պետական հրատարակչությունը 1958-ին, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ։

Ինչպես նախորդ թարգմանությունները, այնպես էլ այս թարգմանությունը հանդիսանում է մեծ ներդրում հայ թարգմանական գրականության գանձարանում։

«Գոլեստան»-ի թարգմանիչներ Հ. Թիրյաքյանը, Մ. Մաքսուդյանը, Ա. Մելիք-Վարդանյանը, Ս. Ումարյանը, Հ. Աճառյանը և մյուսները մեծ ջանք ու աշխատանք են ներդրել առերևույթ պարզ թվացող, բայց ըստ էության խիստ բարդ ու դժվարին սույն աշխատանքը հաջողությամբ պսակելու համար, և պետք է ասել, որ ընդհանուր առմամբ թարգմանիչներին այդ հաջողվել է։ Նրանք ձգտել են ամեն կերպ հարազատ մնալ հեղինակի ոչ միայն ոգուն, այլև ձևին, հիմնականում պահպանելով արձակ ու չափածո հատվածները, գեղարվեստական պատկերները, ներքին հանգավորումը, սակայն երբեմն անհրաժեշտորեն կատարելով յուրովի մոտեցում, որի ընթացքում մերթ արձակը թարգմանել են սեղմ ու ամփոփ, սակայն դրա փոխարեն ձգձգել ու ավելորդել չափածոն, անշուշտ զիջելով տաղաչափական արվեստին՝ բարեհնչյունության, հանգին ու չափին, և մերթ էլ տարվելով բանաստեղծական արվեստով, հեռացել հեղինակի արտահայտած մտքերից։

Չնայած թարգմանիչների մեծ զգուշության ու բարեխղճության, կան մի շարք հատվածների, քառյակների բացթողումներ, ոչ ճիշտ թարգմանություններ, իմաստի շեղումներ, թերի նախադասություններ, ավելորդ բառեր, լեզվական կանոնների մեղանչումներ, չափածոն արձակի վերածելու դեպքեր։

Ինչ վերաբերում է թարգմանական արվեստին, ապա յուրաքանչյուրն ունեցել է իր մոտեցումը։ Հ. Թիրյաքյանը ձգտել է նույնությամբ պահպանել հեղինակի թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական կողմը, ինչպես և ամբողջականությունը, մինչդեռ Ա. Մելիք-Վարդանյանը զանց է առել որոշ հատվածներ, հատկապես արաբերեն բանաստեղծական տողեր, երբեմն շեղվել է բուն մտքից, կամ բանաստեղծական չափն ու հանգը ապահովելու համար ծանրաբեռնել ավելորդ բառերով։

Թարգմանիչ Թիրյաքյանը ավելի զգույշ է վարվել և աշխատել է որքան կարելի է հարազատ մնալ հեղինակի լեզվին, ոճին և յուրահատկությանը, ինչպես և հայերենի անաղարտությանը, մինչդեռ Մելիք-Վարդանյանը ավելի ազատ է աշխատել, որի ընթացքում բաց է թողել մի շարք հատվածներ, հատկապես արաբերեն բեյթեր և իմաստություններ, որոնց թարգմանությունն ավելի մեծ աշխատանքի կարոտ է, ձգձգել է նախադասությունները, կրկնապատկել չափածո տողերը, չկարողանալով ամփոփ ու սեղմ տալ հեղինակի մտքերը։

Թարգմանական սխալները, ինչպես և բացթողումներն ու հավելումները ավելի շատ առկա են Մելիք-Վարդանյանի մոտ, քան Թիրյաքյանի թարգմանության մեջ։ Հոմանիշների, տարբերակների, ածականների օգտագործման դեպքում Թիրյաքյանն ավելի անկաշկանդ է, այսինքն բառապաշարն ավելի առատ է ու հարուստ, որի հետևանքով, ի հակադրություն Մելիք-Վարդանյանի, ավելի սեղմ ու գեղեցիկ է արտահայտել մտքերը։

Իսկ ինչ վերաբերում է թարգմանության փոխադրված լեզվին, ապա Թիրյաքյանի մոտ այն անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է, քան Մելիք-Վարդանյանի թարգմանությունը։

«Գոլեստան»-ի թարգմանությամբ զբաղվել են նաև Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը, ակադեմիկոս Հ. Աճառյանը և ուրիշներ։ Չնայած սրանց թարգմանությունները հատվածային են, բայց որոշակի է մոտեցումն ու թարգմանական որակը։

Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի թարգմանությունից մեզ հայտնի են մի քանի հեքիաթներ և առանձին հատվածներ տարբեր գլուխներից, որոնց մեր պրպտումների ընթացքում հանդիպել ենք «Անահիտ» հանդեսում (Փարիզ) և «Լումա» ամսագրում (Թիֆլիս)։ Թարգմանություններն ընդհանուր առմամբ կատարված են բնագրին հարա-

զատ, գրեթե զերծ ծղծկումներից և ավելորդություններից, առավել բարեխիղճ դեպի թարգմանական լեզուն՝ հայերենը, որոշ տեղեր պահպանելով ներքին հանգավորումը, նույնիսկ արձակ էջերում, որ շատ բնորոշ է պարսկերենին։

«Գոլեստան»-ի թարգմանությամբ զբաղվողներից է նաև ակադեմիկոս Հ. Աճառյանը, որի թարգմանությունը, դժբախտաբար, ամբողջական չէ և անտիպ է, բայց առանց վերապահության, կարելի է համարձակորեն ասել, որ ամենակատարյալն է։ Աճառյանի թարգմանությունը նախ միանգամայն հարազատ է բնագրին, երկրորդ՝ զերծ է ավելորդ բառերից, չի դիմել կողմնակի միջոցների բուն միտքն արտահայտելու համար, տվել է միանգամայն հստակ, ճիշտ և որ ամենակարևորն է՝ գեղեցիկ, բանաստեղծական, պահպանելով պարսկական պոեզիայի համն ու հոտը։ Մնում է ափսոսալ, որ հեղինակի բազմազբաղվածությունը թույլ չտվեց ամբողջացնել և հրատարակել այս թարգմանությունը։ Մեր ձեռքի տակ եղած հատվածները թույլ են տալիս ենթադրելու, որ այդ թարգմանությունը «Գոլեստան»-ի թարգմանությունների պսակը կհանդիսանար։

Հատկանշական է, որ Սաադիի թարգմանիչները հանդիսանում են տարբեր բնագավառների ու մասնագիտությունների անձնավորություններ։ Այսպես, Շեքսպիրի հայտնի թարգմանիչ Հովհաննես Խան Մասեհյան, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյան, բժիշկ Հարություն Թիրյաքյան, խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյան, արևելագետ Ռուբեն Աբրահամյան և ուրիշներ։ Սակայն չնայած այսպիսի բազմազանության, բոլորին էլ հավասարապես հետաքրքրել և հուզել են Սաադիի ինչպես արձակ, բարոյախոսական գրվածքները, այնպես էլ չափածո, հուզական բանաստեղծությունները։

Բոլորովին տարօրինակ չէ, որ Շեքսպիրի մեծ տաղանդով տարված ու ոգևորված Հովհաննես Խան Մասեհյանը կարող էր հրապուրվել նաև Սաադիի արևելյան մոտիվներով շաղախված խոհերով ու զգացումներով, և կամ բժիշկ Հարություն Թիրյաքյանը, որ կոչված էր մարդկության ամենամեծ օգտակարության, կարող էր նույնչափ սիրել ու իր կյանքի զգալի մասը հատկացնել իրանական պոեզիային ու գրականությանը՝ մարդկային հոգու թափանցման։

Անշուշտ շատ բնական է, որ իր կյանքն արևելագիտությանը, հատկապես իրանական գրականության և լեզվի ուսումնասիրությանը տրամադրած և այդ ասպարեզում պրոֆեսորություն նվաճած Ռ. Աբրահամյանը, իր կատարած բազմապիսի ուսումնասիրությունների կողքին, դներ նաև հռչակավոր «Շահնամե»-ի իր թարգմանությունները։ Սակայն միանգամայն տարօրինակ կարող է թվալ, որ խոշորագույն հայագետ-լեզվաբան Հ. Աճառյանը, որ իր ամբողջ կյանքը հատկացրել է լեզվագիտության և հայագիտության տարբեր հարցերի ուսումնասիրման և տվել բազմաթիվ ու բազմահատոր մեծարժեք աշխատություններ, կարող էր իր այդ սուղ կյանքից հատկացնել Սաադիի թարգմանությանը։ Ուրեմն չպետք է զարմանալ նաև, որ Շեյխ Սաադիի ստեղծագործությունն իր էությամբ լինելով աշխարհիկ և քնարական, կարող էր խոսել մի վարդապետի հոգու հետ, ինչպիսին էր Մեսրոպ Մաքսուդյանը և ոգևորել ու մղել ընդհուպ նրա թարգմանությանը։ Հետևաբար շատ բնական է, որ Սաադիի թարգմանությունները կարող էին լայնորեն ասպարեզ գտնել ինչպես Չոպանյանի «Անահիտ»-ի, այնպես էլ Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի էջերում, ինչպես Թաղիաթյանցի «Ազգասեր», այնպես էլ Գյուտ ավագ քահանա Աղանյանի «Լումա» հանդեսներում։

Թեհրանից Փարիզ, Փարիզից Պոլիս, Պոլսից Կալկաթա, Նյու-Յորք, մինչև Թիֆլիս ու Ալեքսանդրապոլ, սկսած անցած դարի 40-ական թվականներից, Սաադին խոսում է հայ ընթերցողի հետ։